

## ԲՄ համակարգ

ԲՄ համակարգը կիրառվում է ԱՊՊԱ պայմանագրի ապահովադրի նկատմամբ.

$$ԲՄ = ԲՄ_{նախ} \pm ԲՄ_{փոփ},$$

Աղ.2

ԲՄ	Ապահովադրի ԲՄ դասն է	
ԲՄ <sub>նախ</sub>	Ապահովադրի վերջին անգամ հաշվարկված ԲՄ դասն է	
ԲՄ <sub>փոփ</sub>	ԲՄ դասի փոփոխությունն է՝ հաշվարկված հետևյալ եղանակով	
	ԲՄ <sub>փոփ</sub> =	<p>(+U), եթե <math>J \geq 0,412</math></p> <p>(0), եթե ապահովադրի ԲՄ դասի վերջին վերահաշվարկի ամսաթվից հետո անցել է 365 պայմանագրային օր և այդ օրը <math>0,103 &lt; J &lt; 0,412</math></p> <p>(-1), եթե ապահովադրի ԲՄ դասի վերջին վերահաշվարկի ամսաթվից հետո անցել է 365 պայմանագրային օր և այդ օրը <math>J \leq 0,103</math></p>
	որտեղ.	
	U	մալուսային դասերի քանակն է և հավասար է J կարգավորող գործակցին՝ դրա կոտորակային մասը մինչև ամբողջական թիվ կլորացված (0,412-ից փոքր նիշերը կլորացվում են դեպի ներքև, իսկ մեծ կամ հավասար նիշերը՝ դեպի վերև)
	J	կարգավորող գործակիցն է՝ հաշվարկված հետևյալ բանաձևով.
	$J = 4 * (1/C_1 + \dots + 1/C_n)$ , որտեղ.	
	C <sub>n</sub>	ապահովադրի ԲՄ դասի վերջին վերահաշվարկից հետո տեղի ունեցած n-րդ ԲՄ դեպքի հիմք հանդիսացող պատահարի պահին ապահովադրի անունից կնքված և գործող ԱՊՊԱ պայմանագրերում նշված SU-ների քանակն է:
	պայմանագրային օրեր	2012թ. Դեկտեմբերի 31-ից հետո ընկած օրերի քանակ, որոնց ընթացքում առկա է եղել ապահովադրի կողմից կնքված ԱՊՊԱ պայմանագիր (պայմանագրեր):

**ԲՄ դասին համապատասխանող գործակիցները հետևյալն են.**

Աղ.3

ԲՄ խումբ	ԲՄ դաս	ԲՄ գործակից
<b>Բարձր ռիսկային</b>	դաս 22	250%
	դաս 21	250%
	դաս 20	250%
	դաս 19	200%
<b>Միջին ռիսկային</b>	դաս 18	144%
	դաս 17	140%
	դաս 16	132%
	դաս 15	124%
	դաս 14	116%
	դաս 13	112%
	դաս 12	108%
դաս 11	104%	
<b>Բազիսային</b>	դաս 10	100%
<b>Ցածր ռիսկային</b>	դաս 9	97%
	դաս 8	94%
	դաս 7	91%
	դաս 6	88%
	դաս 5	85%
	դաս 4	82%
	դաս 3	75%
	դաս 2	65%
դաս 1	50%	

Ապահովադրի ԲՄ դասի հաշվարկման ժամանակ նրա՝ մինչև սույն կանոններին ուժի մեջ մտնելը ձևավորված ապահովագրական պարմությունը հաշվի է առնվում հետևյալ կերպ.

1. 2012թ. դեկտեմբերի 31-ից հետո ուժի մեջ մտած որևէ ԱՊՊԱ պայմանագրում որպես լիազորված տիրապետող (ներառյալ՝ վարելու իրավունք ունեցող ապահովադիր) չնշված անձանց համար մինչև սույն կանոններն ուժի մեջ մտնելը ձևավորված ողջ ապահովագրական պատմության նկատմամբ կիրառվում են սույն կանոնների դրույթները

2. 2012թ. դեկտեմբերի 31-ից հետո ուժի մեջ մտած որևէ ԱՊՊԱ պայմանագրում որպես լիազորված տիրապետող (ներառյալ՝ վարելու իրավունք ունեցող ապահովադիր) նշված անձանց համար որպես լիազորված տիրապետող հաշվարկված ԲՄ դասը մինչև սույն կանոններն ուժի մեջ մտնելը վերջին անգամ փոխելու կամ ԲՄ դաս ստանալու օրը համարվում է իբրև սույն կանոններով նախատեսված՝ ապահովադրի դասի վերջին վերահաշվարկման օր, իսկ որպես լիազորված տիրապետող ստացած ԲՄ դասը՝ իբրև ապահովադրի վերջին անգամ վերահաշվարկված ԲՄ դաս՝ այդ օրվանից հետո ընկած ժամանակահատվածի նկատմամբ կիրառելով սույն կանոնների դրույթները: